

Մշակութային Սյունիք լրատվական պորտալ

ՎԱՉԱԳԱՆՑԻ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԸ շարքից
Ասում են տաղանդավոր մարդը
տաղանդավոր է ամեն ինչով:

Այսօր ներկայացնում ենք ևս մի վաչագանցի արվեստագետի, բազմատաղանդ մի մարդու, ով իր կատարած գործերով ներկայացնում է արվեստի տարբեր ճյուղեր՝ լուսանկարչությունը, գեղանկարչությունը, Ֆոտոգեղարվեստը, գրականությունը, կինոարվեստը, մամուլը՝ նա մեկ կինոռեժիսոր է, մեկ լուսանկարիչ, մեկ գեղանկարիչ, մեկ թղթակից: Եվ այդ բոլորը գալիս է իր այն մեծ ու հզոր ներշնչանքից, որ ստացել է հարազատ Վաչագան գյուղից և գյուղի սնարին հարազատ հոր պես թևատարած ու ամուր կանգնած Խուստուփ սարից:
Ավելի լավ է կարդանք հեռավոր մանկությունից հորդացող նրա հուշերը.
- Հաճախ է պատահում, որ իմ հիշողությունների ալիքը ափ է նետում գունավոր խեցիներ, որոնցում անցած օրերի հարազատ խշշոցն է ու երբեք չխամրող մանկության

մարգարիտները...Դրանց արտացոլքի մեջ՝ Խուստուփի իմաստուն հայացքն է, լանջերի կանչող երանգները, գետի զիլ զրույցներն ու երկնքի լուսառատ գիրկը, որ այնքան մոտ էր թվում ինձ երեխա ժամանակ...Պարզկա գիշերներին ձեռքերս պահում էի վերև ու փորձում ափերիս մեջ հավաքել աստղերի լույսը... Այնպես էի տարվում խաղով, որ թվում էր, թե ես էլ ինչ-որ ժամանակ իջել եմ աստղի ուսից ու արթնացել Խուստուփի առասպելական լանջերին...Հետո վազում էի դեպի դարավոր ծառերի գիրկը,որը նույնքան բաղձալի էր, որքան երկինքը...Բարձրանում էի ճյուղերն ի վեր, տեղավորվում սաղարթների անդավաճան հյուսքում ու քնում այնքան, մինչև ինձ գտնում էին տնեցիների անհանգիստ կանչերը...Տունդարձի ճամփան ձգվում էր աստղալույսերի հետ, ու լռության մեջ արձագանքվում էր

ձիերի վրնջյունը...Ձիերի հետ իմ մտերմությունը զարմանալի օրինակներ ունի...
Ամռան մի օր քրոջս հետ մի նեղլիկ ոլորանով բարձրանում էինք Վաչագանի՝ Քոլու կոչվող հանդամասը ..Առջևից դեպի մեզ էր գալիս բեռնավորված մի ձի՝ տիրոջ ուղեկցությամբ...Կանգնեցինք մի կողմ՝ ճանապարհ տալու: Հանկարծ ձին կանգ առավ, այնպես մեխվեց տեղում, որ նույնիսկ տերը անակնկալի եկավ այդ համառ անշարժությունից....Հետո մի խենթ պոռթկումով՝ ձին, խրխնջալով քայլեց դեպի ինձ...Գլուխը դրեց ուսիս: Գրկեցի պարանոցը, ու մի քանի րոպե ապրեցինք հարազատի մտերմությամբ...
Հաճախ, երբ հիշողությունների ալիքը ինձ տանում է ետ՝ դեպի Վաչագանի դրախտային ափերը, ինձ երևում են այնքան մոտ թվացող աստղերը, ծառերի օրորոցն ու ձիու կարոտագին հպումը...

ԺԻՐԱՅՐ ԼԵՆԴՐՈՒՇԻ ԱՂԱՎԵԼՅԱՆ
ծնվել է 1955-ին Երևանում: 1972-ին ավարտել է Հակոբ Պարոնյանի անվան թիվ 59 դպրոցը: Ծառայել է բանակում (Գերմանիա): Զորացրվելուց հետո ընդունվել և ավարտել է Էջմիածնի ակումբագրադարանային տեխնիկումի ռեժիսորական բաժինը: 1977-1980 թվականներին ավարտել է «Հայֆիլմին» կից դերասանի ժողովրդական ստուդիան՝ ստանալով կինոյի և դրամատիկ թատրոնի դերասանի որակավորում: 1977-1991 թվականներին աշխատել է Հայաստանի Հանրային հեռուստատեսության ստուդիայում որպես ռեժիսոր: 1984-1989 թվականներին սովորել և ավարտել է Լենինգրադի Կուլտուրայի ինստիտուտի կինոռեժիսորական բաժինը: 1991

թվականին մեկնել է Ամերիկա, 2012 թվականին վերադարձել Հայաստան: Ֆոտոգեղարվեստով զբաղվել է 2009 թվականից: Ունեցել է բազմաթիվ ցուցահանդեսներ ոչ միայն հայրենիքում, այլ նաև նրա սահմաններից դուրս:
Քանի որ մասնագիտությամբ կինոռեժիսոր է. որոշեց ֆոտոն վերածել շարժման, միաժամանակ դրան տալ ոգեղենիկ, փիլիսոփայական կյանք: Այն դարձավ սկիզբ ու գունային փնտրտուք, անվանվեց ֆոտոռեժիսուրա: Այնուհետև ներքին թելադրանքը ճանապարհ բացեց դեպի ֆոտոգեղարվեստը:
Արժանացել է բազմաթիվ դիպլոմների: Բազմիցս, տարբեր հոդվածներով, տպագրվել է մամուլում:

Ժիրայր Աղավելյանը մի շարք գեղարվեստավավերագրական ֆիլմերի հեղինակ է.
«Վարդանանք» (1984), «Քարերի սիմֆոնիա» (1987), «Լավաշ» (1988), «Ո՞վ է նա. Էդվարդ Ղազարյան» (1989), «Նռան ճյուղերով բոցուն» (1989), «Հավերժի ճամփորդը» (1989), «Տուր մեղքերիս թողություն» (199Օ«Հայկական գոյապայքար» (1993, ԱՄՆ)
Տպագրել է երեք գիրք՝ «Առ ինձ ձեռքերիդ մեջ», «Մտքի մանրանկարներ»- աֆորիզմներ, Երեք հասակ՝ ինքնակենսագրական վիպակը:

ՆՅՈՒԹԻ ՀԵՂԻՆԱԿ ՆԻՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ